

# ԵՒԳԻՆԵ

ԹԱՏԵՐԴՈՒԹՅԻՆ ԵՐԵԲ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄՔ  
Շ Ե Ր Վ Ա Ն Զ Ա Գ Է Ւ

(Տար. եւ լիեր)

—o—

**Այսպէս** է արդեօք ինքը, տղամարդը : Նրան միանգամայն խորթ ու անծանօթ են այն ամենը ինչ որ տեսանք կնոջ հոդու եւ մարմնի մէջ : Կուսական անարատութեան զգացման հետքն անգամ չկայ տղամարդու մէջ, որին ընդհակառակը, բնութիւնը պարզ, և է մի տաք ու կրքու խառնուածք, նախաձեռնութեան ողի, վասկուն եւ անզում սեռական ցանկութիւն եւ բուռն վաւաշոտ հաճոյք : Դարւինի կարծիքը այսպիսի խնդիրում գրեթէ օրէնքի նշանակութիւն ունի . «արուն և լիշտ, ասում է նա, որ որոնում է եղին» . եւ ինկատի ունեցե՞ք, այդ ուժշղին կիրքն ու բուռն ցանկութիւնը բնութեան կողմբց չեն սահմանափակուած ո՛չ մի պատշառով, ո՛չ ֆիզիքական նեղութիւն եւ տանշանք, ո՛չ յզութեան սարսափ, ո՛չ զաւակնածքն իսկ մի մի բարոյական կամ գրկանք . . .

**Այսպէս** ուրեմն, ինքը, բնութիւնը մի մեծ խրտմատ է գրել մեր երազակ հաւասարութեան մէջ : Կոնչ ցանկութիւները նուազ են, կիրքը սահմանափակ, սեռական գրդիքն ու հաճոյքը չափաւոր, օժտուած՝ կուսական զգացումով հոգեպէս, եւ ապահովուած ֆիզիքապէս : — այնինչ տղամարդունը ամէն բանով բուռն, զօրեղ, գերազանց, անզուսպ՝ տանց որ եւ է բարոյական կամ ֆիզիքական խոչոր պատահանաւութեան ու կորուստի :

Ո՞վ ուրեմն այս երկու արարածներից ընտանակ է համբերող ու ժուժկալ լինելու . . . եւ եթէ մենք բաց ենք անում համբերութեան ու զգաստութեան սահմանները երկուսի առաջ հաւասարապէս, մի անալոգարութիւն չէ դա արդեօք բնութեան օրէնքների կամ հէնց հաւասարութեան զէմ, որպէս սկզբունք . այնպէս որ, մեր կրթուած ու զիւլօմաւոր Ալավերեանը, որ մասնագէտ է մարդկային օրէնքներին եւ ճարտար իրաւաբան, բնութեան օրէնքներին եւ իրաւունքներին՝ որոնք յաւիտենական են եւ անխախտելի, միանգամայն անտեղեակ է երեւում :

Բայց կարելի է առարկել, որ մարդասիրութիւնն ու ներքին ձայնը մեզ դրդում են իսկ ուշազրութեան չառնել բնութեան բիրտ ու կոպիտ օրէնքները : իսկ մեր ներքին ձայնը չի կարող չհամաձայնիլ Ալավերեանի հետ :

որը մեծահոգութեամբ ներում է իր ամուսնու յանցանքը : Մեր դարու լայն ու մարդասէր գաղափարները չեն կարող թոյլ աւալ որ մարդը վայելի ամէն տեսակ ազատութիւն, իսկ կինը ճնշուած ու փակուած մնայ հարեմական կապանքների տակ : Դա զէմ է արդարութեան հասկացողութեանը, որ եւրոպական լուսաւորութիւնը մացրել է մեր մէջ :

Ալավերեանի խիզն ու բանականութիւնը պահանջում էին որ նա սուս ու փաս լոէ, ու ներէ, այն պատճառով, որ ինքն էլ անարատ մէկը չէ եղել . «Ես հաւասարութեան երկրպագու եմ, մտածում է նա կինս յանցանք եւ սիսալ է գործել, բայց զէ ես էլ մի բարի պառուղիմ եմ եղել. հետեւաբար մենք բնիս ենք . . . ըստ առածի՝ այծը կտաւէն գուրս : »

Այս գաղափարը կայ օգի, մամուլի եւ քիչ թէ շատ կը թուած հասարակութեան մէջ, բայց եւ այնպէս, ամէն մարդ, ինքն իրան, իր սրտի խորքում, մի քիչ այլ կերպ է մտածում : Հեշտ է, ինարկէ թատրոնում ոչեւորութիւն ու ծափանարել ներող եւ ազատամիտ հերոսին, բայց սոյն «գրաման» ունենալ իւր սեփական տառնը, տեսնել իւր մօրը, կոնչը, հարսին եւ կամ քրոջը եւ գինէի գերում, կարծեմ մեզանից ոչ ոք չէր ցանկանայ :

Ի՞նչ է պատճառը, միթէ մեր խելքն ու բանականութիւնը, մեր խիզն ու համոզումները, մեր ուսումն ու կը թուածիւնը բաւական չե՞ն խեղեկումներ մէջ զազանը եւ թօթափելու դարերով խտացած բնազզը . . . եւ եթէ կայ մի այդպիսի կոխ կամ տարակուսանք, չունի՞ զա արդեօք մի խոր, ընկերական-բարյական հիմունք, որը մենք չեն կը ոզնել հակառակ մեր բուռ ճիզ ու չանգերին : Չունի՞ արդեօք Ալավերեանի հոդ և կան տանջանքները խոր բարոյական պահանձներ : Մի պատրանք չէ արդեօք, որ ամենը մենք վերազրում ենք զազանի որ բնալիլին, որ ըլիում է կոյր նախանձից և սուսնող առնում արուի խանդու հոդու խորքերում . . .

Կան գուցէ մեր դիտակցութեան մէջ աղօտ մնացած կայծեր, որոնց զոյութիւնը մենք ու բանակ չենք կարող՝ հակառակ մեր բուռ համոզումներին :

Արդ քննենք ու վերլուծենք Ալավերեանի տրամաբանութիւնը, եւ տեսնենք, համապատասխանում է զա, որա զաւանած հաւասարութեան եւ մարդասիրութեան սկզբունքներին :

«Ես կոնչ ներում եմ» . բնչու, որովհետեւ ե ոինքս արարածոր եմ, — այն ինչ ո ինձը

ներելի է, ներելի է եւ նորան, քանի որ մենք  
հաւասար ենք»:

Շարունակենք այս տրամաբանութիւնը. —  
«Ես արատառոր եմ, հետեւաբար կինս էլ կա-  
րող է արատառոր լինել. ես աւազակ եմ, իբա-  
ւունք եմ տալիս նոյնը լինելու եւ կնոջս :  
անառակ եմ, թող կինս էլ անառակ լինի, հրէշ  
եմ, կարող է կինս էլ հրէշ գառնալ...»:

Այստեղ անմիջապէս յառաջ է զալիս մի  
հարց, ես իբաւունք ունի՞մ արգեօք «արատա-  
տառոր», «կեղառո» եւ «հրէշ» լինելու. —ո՞չ :  
—ինչպէս սհապա իմ չունեցածը ես իբաւունք  
եմ համարում տալու ուրիշին : Սա մի ակնե-  
րեւ անիմաստութիւն է : Եւ ի՞նչ է իմ տուածն  
ըստ էութեան. իմ արատը, իմ կեղար եւ իմ  
ապականութիւնը : Ես ստոր եմ եղել, ես թե-  
րացել եմ վարք ու բարքի մէջ եւ եւ թոյլ եմ  
տալիս նոյն թերութիւններն իմ կնոջը. ես  
հաւասարեցնում եմ նրան իմ արատի, կեղտի,  
թերութեան եւ ա' յն ամենի հետ, ինչ որ ինքս  
իբրեւ բարուական մարդ իբաւունք չունիմ  
անելու : Պարզ ի պարզոյ ես նորան տալիս եմ  
անբարյագանութիւն : Իմ տուածը մի գրական  
արժանիք չէ, այլ բացասական կողմը : Հետե-  
ւաբար այստեղ իբաւունքի մասին խօսք ան-  
դամ լինել չի՝ կարող, ա' յն ինչ որ արդիւնք  
է մեր թուլութեան ու մեղկութեան տալիս  
ենք վայելելու մեր կնոջը : Բարձրացում, զար-  
դացում չէ զա կնոջ համար, այլ մի կատարեալ  
անկում :

Կը ներէ՞ր արգեօք Ալավէրտեանը, եթէ ինքն  
անարատ լինէր, եթէ նա իր մարմին եւ հոգու  
բոլոր դանձերը պահած լինէր մի անարատ ըն-  
տանիք կազմելու համար : Այն ինչ որ նա է  
տրամաբանում, մի կատարեալ ծաղը է հաւա-  
սարութեան համար, «Ես մեղաւոր եմ եղել, կա-  
րող էր կինս էլ նոյնը լինել». — կինս ուրեմն  
արդարանում է ինչ մեղքով : Ուրիշ խօսքով,  
մենք ներում ենք ոչ թէ մեր կնոջը, այլ մեզ  
միայն : Եռարա անցանքը ես ծածկում եմ ի-  
մինով. ներում եմ նորան, որովհետեւ ինիս ինձ  
ներել եմ... այս ամենը ինչպէս տեսնում էք,  
բուրում է մի կատարեալ մեղկութիւն, մի ստոր  
հսամութիւն, եւ մի չնտկան ծաղը... Հերիք  
չէ որ ես յանցաւոր եմ, ես համարձակում եմ  
«ներելու» նաև ուրիշին եւ այդ ուրիշը դեռ  
«14 շահի էլ պարտք է մոռմ ինձ», եւ այս տ-  
մենը ես ծախում եմ հաւասարութեան, վեհանձ-  
նութեան եւ մարդասիրութեան տնուննեւ  
րով...

Սա ինչպէս տեսնում էք, մի շա'տ ձեռնառւ  
առուտառ է տղամարգու համար. «Ես չեմ կա-  
րող յեզ յափ մայուր լինել» բայց բոյլ եմ ասլիս,  
մինչեւ անզամ մեծահոգութեամբ Աերում եմ,

որ դուն ինձ յափ կեղտոս լինես» :

Ամէն մի անարատ կին պիտի սոսկար այս  
քարոզից եւ պիտի բողոքէր մի այդպիսի բա-  
րոյականութեան գէմ, որը նորան ուղղակի  
դէպ ի անկումն է տանում : Իբրեւ չնորհալի  
զիտող, պ. Շիրվանզաղէի աչքից չէ վրիպէլ  
մաքուր կնոջ այդ զգացումը : Երբ Ալավէրտ-  
եան «մեծահոգութեամբ ներում է իր կնոջը»,  
նորա քոյրը Մարթան, որ մինչ այդ ատեն  
«ազատամիտ եւ լայն հայեացքների տէր մի  
կին» էր, հեռանում է եղբօր տանից, ա-  
սելով . «Մոռանում ես կնոջը յանցանքը,  
մոռացիր եւ ինձ» : Բայց այդ արդարացի,  
հոգեբանօրէն միանգամայն ճիշդ, հետեւաբար  
եւ բարձր գեղարուեստական գիծը պիեսայի  
մէջ ծաղրուած է տաղանգաւոր կերպով, որով-  
հետեւ զա հեղինակի հիմնական հայեացքին  
հակասակ է, ուստի իբրեւ Ալավէր-  
տեանի բարձր բարոյականութեան մի ողորմե-  
լի կոնսրատատ ներկայացուած է, այնպէս որ  
ամբողջ հասարակութեան ծիծաղն է շարժում :  
Մարթան չէ կարողանում փաստաբանել եւ  
ապացուցանել, բայց նա իր հոգու անարա-  
տութեամբ շա'տ աւելի խոր եւ շա'տ աւելի  
հեռուն էր տեսնում քան իւր եղբայրը : Իբրեւ  
մաքուր կին, նա ամբողջ էութեամբ զգում  
էր, որ այդ ներումը եթէ համայնական բնու-  
թիւն ընդունէ, պիտի կնոջ ամենասրբազան  
իբաւունքների ճիմը փորէ, լայն ճանապարհ  
բանալով Գաբօների առջեւ. տուժողը այդպի-  
սի գէպքերում պիտի լինեն միմիայն ամենա-  
ազնիւ անհատաները ... ինքը, «տղատամիտ,  
կրթուած եւ լայն հայեացքների տէր» Մար-  
թան, շա'տ լաւ էր զգում, որ գա լրաւունի չէ,  
այլ պարտազանցուրին, մինչ նորա իբաւարան  
եւ այսպիսի հարդերում իբաւադէտ եղբայրը  
զուրս գալիս է ոչ միայն տգէտ, այլ գրեթէ  
անբարյական մէկը, որ իր պարտազանցու-  
թիւնը ուրիշին տալիս է իբրեւ իբաւունք :  
Այլ կերպ պիտի զգար ու մատծէր մեր վեհա-  
նաձն պարունը եթէ ինքն էլ Մարթայի նման  
անարատ եւ անմեղ լինէր ...

Պ. Շիրվանզաղէն հարց այստեղ բաւական  
նեղ է դրել : Նա վերցրել է կնոջ սխալը նորա  
ամուսնութեւնից առաջ որը, ինձ թւում է ,  
բոււակն հազուագէպ երեւոյթ է մեղանում :  
Բայց հազւագէպ չէ, մինչեւ անդամ շա'տ յա-  
ճախսակէպ է կնոջ սխալը եւ ամուսնութեան  
մէջ ...

Ուռա հեղինակ Ն. Գանչենկօ, այդպէս էլ զը-  
նում է հարցը իր «կեանքի արժեքը» պիեսա-  
յում, ուր հերոսուհի տիկինը առանց որ եւ է  
հիմնական պատճառների զաւածանում է ա-

մուսնում . սիրականը ինքնասպան է լինում եւ ամուսինը ներում է յանցաւոր կնոջը, վախանալով որ նա էլ կարող է անձնասպանութիւն դորդել :

Ինձ թւում է , որ պ. Շիրվանզաղէն այս խառը գրել է ոուս կեանքի եւ զրականութեան ազդեցութեան տակ , ուր , պէտք է ասած , ամենալայն եւ համբերող հայեցքներ են տիրում այսպիսի հարցերի վերաբերեալ : Այլ կերպ է նայում այդ հարցին ժամանակակից դրամատուրգներից մէկը , Զուգերման : «Հայրենի տան» մէջ (Հեսու) ծերունի զինուորականը հարցափորձի է ենթարկում իր դուստր Մագտային եւ միեւնոյն ժամանակ պատրաստում է սպան'ը իրան կամ զստեր , սուկայն երբ իմանում է նորա արատաւոր լինելը , կաթուածահար մեռնում է : Ի նկատի ունեցէք , որ սա մի հայր է եւ ոչ մի ամուսին , եւ չի կարողանում ներել մի աղջկայ , որը ներուելու բոլոր հանգամանքներն ունէր , նա մի զերասանուհի էր , իւր հայեցքներով մի աղատ թռչուն :

Միայն գրականութիւնն ու ժամանուլը չէ , որ զբաղւում է այս հարցով : Դրա վրայ երկար ժամանակ զլուխ են ջարդել նաև օրէնսդիրներն ու կառավարութիւնները :

Ճիշդ Շիրվանզաղէի հաւասարութեան գասզափարից գրգուած , ի նկատի ունենալով մանաւանդ անմեղ մանուկների վիճակը , Գերմանիայում մի 10-15 տարի սրանից առաջ մի օրէնք հրատարակեցին , որով ապօրինի զաւակներու հայրերը պարտաւորում էին հոգալու իրենց որդոց ապրուստը : Սակայն , այդ մարդասէր օրէնքը մի զարմանալի հետեւանք ունեցաւ : Դրահրատարակումից յետոյ ապօրինի ծնունդների թիւը զարմանալի կերպով սկսեց աճել : Մինչ այն ժուկեկալ ու համեստ Գերմանուհիք սկսեցին իրանց վրէժն առնել տղամարդկանցից՝ բեոցնելով նրանց վրին բազմաթիւ երեխաներ , որոնց կերակրել էր հարկաւոր :

Հաւասարական այդ դաւն փորձից յետոյ , օրէնքն ստիպուած էին փոխելու ...

Արդ , պ. Շիրվանզաղէի գլուցիկ ու մարդափարական թատերգութիւնից յետոյ , որին այնուիսի ջերմութեամբ ծափահարեցինք ամբագա , պատրաստ ենք արդեօք ընդունելու եւ այն «սիւրպիզ»ները , որ Գերմանուհիների նման հայ օրիորդներն էլ պիտի ցանկային անել իրանց սիրականներին . . .

Մենք հարցը քննեցինք , առաջին՝ բնագիտական տեսակէտով , եւ գտանք , որ այս խընդրում կնոջ եւ մարդու հաւասարութեան մասին խօսք լինել չի կարող : Երկրորդ՝ նոյն հարցը մենք քննեցինք բարոյական տեսակէտից , եւ տեսանք , որ Ալավէրտեանի տուածը իւր կնոջ իւր իրաւունելերը չեն այլ իւր պարտազանցուրինն ու ցոփուրինը , եւ այսաել իրաւունքի կամ արդարութեան մասին խօսք անդամ չի կարող լինել : Երրորդ՝ խնդիրը նկատեցինք իւր հետեւանքների զործնական տեսակէտովն եւ գտանք , որ գալուին վտանգաւոր է : Ուրեմն , եղբակացութիւն , խաղի հիմնական միտքը ոչ միայն սխալ , այլ եւ վտանգաւոր է ամէն տեսակէտով : — չերցնելով մի բացառիկ երեւոյթ , հեղինակը մեզ մի բարոյականութիւն է քարոզում , որ արդինք է թիւրիմացութեան եւ իրան հետ միասին մեզ էլ այն համոզումն է ներշնչում , թէ Ալավէրտեանի կատարածը մի օրինակելի եւ վեհանձն գործ էր : Այս սխալը , ինչպէս տեսանք , միայն պ. Շիրվանզաղէինը չէ . այդ սխալը կատարել են շատ մեծ ու փոքր եւլուպական հեղինակներ . կատարել է , ինչպէս տեսանք , եւ գերմանական Ռայխստավլը , ուր Բիսմարկի նման դլուխներ էին իշխում :

#### ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆ

#### ԹԻՖԼԻՍ

Յ. Գ. Այս թատրերգութեան գեղարք ական մասին մենք չենք խօսում . նրա աշակելութիւններն այնքան շատ են , որ պակասութիւններն ու թիւրութիւնները կարելի են մի անգոմայն անտես առնել : Հեղինակը մշակում է իր գործը՝ երկրորդ ներկայաց համար , որից յետոյ , եթէ ուրիշները աչկանին , զուցէ կարողանանք մեր համեստ նը կատողութիւններն առնել : Խաղի աշողութեան ամենաեռանդուն ծափահարողներից միննէինք մենք , տեսնելով մեր առաջին վիպասանին մէջ եւ առաջնակարգ թատրերգակի շնորհք : Թատրոնից մենք հեռացանք այն հաճելի գիտակցութեամբ , որ Առևնդուկեանի տեղը թափուր չի մնալու այսուհետեւ :

Գ. Պ.